



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ա Վ Ա Ր Ա Յ Ր Ի Դ Յ Ո Ւ Ց Ա Ջ Ն Ա Մ Ա Ր Տ Ը

(Մրբոց Ղևոնդյանց ֆահանայից և Վարդանանց զորավարաց տոների առթիվ)



այաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին ամեն տարի «Մրբոց Ղևոնդեանց ֆահանայից» և սրբոց Վարդանանց զորավարացն մերոց հազար երեսուն և վեց

վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատե-
րազմին» տոնախմբությունները կատարում է Բուն բարեկենդանի կիրակին կանխող շա-
բաթվա մեջ, առաջինը՝ երեքշաբթի օր, և երկրորդը՝ հինգշաբթի, որպես ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆ, ինչպես նշում է Ս. էջմիածնի օրա-
ցույցը:

Ս. Ղևոնդյան և Ս. Վարդանան ֆահանուն հավատի և Հայրենիքի մղված հերոսական պայքարի ոգեշնչողներն ու կազմակերպիչ-
ներն էին, որոնք 451 թվականի մայիսին, Ավարայրի դաշտում, Տղմուտ գետի ափին, դեկավարեցին հայ ժողովրդի դյուցազնա-
մարտը, բռնության և խավարի ուժերի դեմ:

Ավարայրի նակատամարտը անցյալում մեր ժողովրդի մղած ազգային ազատագրա-
կան պայքարի պանծալի բարձունքներից մեկն է, հերոսական արտահայտությունը Հայ Ազգի բարոյական կորույթի և բարձր նկարա-
գրի, հայրենասիրության և եկեղեցական ուխտապահության:

Ս. Ղևոնդյան և Ս. Վարդանանց սրտառույ կերպարները և նրանց խնկելի հիշատակը երբեք չեն բառամել սերունդների և հայ հոգիների անդաստանի մեջ, որ հայոց պատ-
մությունն է:

«Տասնևհինգ դարերու կատարներեն,—
գրում է Վեհափառ Հայրապետը Իր 1961 թվականի հունվար 25 թվակիր սրբատառ

կոնդակում, ուղղված ԱՄՆ-ի հայոց Վար-
դանանց ասպետների և Դստերի Վարդանանց
կազմակերպությանը,— Վարդանանք՝ «գո-
րականք յաղթողի պսակեալք ի Քրիստոսէ»,
մեր Ազգի զավակներուն կրաշխեն կենդանի
նուրը իրենց հոգիին և կամքը ապրելու, ա-
զատ ապրելու: Ու կգորացնեն անոնք բազուկ-
ները հայոց, կարիացնեն սրտերը տկար և
թոխի կուտան Հայկյան հանճարին»:

Ս. Ղևոնդյան և Ս. Վարդանան ֆահանուն հոգևորական-
ների այդ լուսե փաղանգը, Հայ Եկեղեցու
պարծանք սրբերն են, իսկ Վարդանանք՝
«ախոյեան Եկեղեցոյ», որոնք երջանիկ ա-
րիությամբ, «արդարութամբն նոխացեալ,
իմաստութեամբ պայծառացեալ, հեղին գա-
րիւնս իւրեանց ի նորոգումն Եկեղեցոյ»:

Ս. Ղևոնդյան և Ս. Վարդանանց պայքարով,
նահատակությամբ, «Եկեղեցիք Հա-
յաստանեայց պայծառապէս զարդարեցան»:
Նրանք գոհեցին ամեն ինչ՝ հանուն հայրենա-
սիրության և հանուն եկեղեցական ուխտա-
պահության, և փորձության ծանր ու մաշկ
օրերին, մնացին տուրման, անկաշառ՝ փառքի
խայծերի և դավերի առաջ, որովհետև, Ավե-
տարանի յույսով գեղեցկացած և արիացած,
եղան ջահակիրները ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ և զի-
նակիրները ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ:

Ս. Ղևոնդյան և Ս. Վարդանանց պայքարի
արգասիքը հանդիսացավ հայության գոյու-
թյան հավերժացումը՝ որպես սուրույն Ազգ և
Եկեղեցի: Հայոց պատմության էջերի մեջ,
մինչև այսօր, Ավարայրի դյուցազնամարտի
«համբան պատմեցի յախտեան», որպես

հայոց պատմության «ազգապանծ և հոգեզմայլ մի էջը»:

Ս. Ղևոնդյան և Երևանի 454 թվականի հուլիսի 31-ին, Պարսկաստանի Ապարաշխարհի նյուչապուն բերդի Ռեանա գյուղում: Պատմությունը պահել է նահատակ այդ հոգևորականների անունները, թվով 9 հոգի, որոնցից մին Ամենայն Հայոց Հայրապետ Հովսեփ Հոգևոցն էր, մի եպիսկոպոս՝ Սահակ Ռշտունյաց գավառից, Ղևոնդ, Արշեն, Մուշե և Սամվել Երեցներ, Քանան և Աբրահամ սարկավազներ և երազարձ պարսիկ ղեկավար նյուչապուն ֆաղափից: Նահատակ հոգևորականների այդ խումբը արդարո՞ւրե՞ն մկրտվեց անունովը խմբի եռանդուն և անվեհեր առաջնորդ Ղևոնդ Երեցի՝ «այր հաատաբար և նշմարտապաշտ» Ղևոնդյանց ֆահաճայից:

Ավարայրում հերոսի մահով ընկան արժանատի նահատակության անբառամ պսակին և անմտանալի հիշատակ թողնելով հայոց պատմության դյուցազնական էջերում՝ 1036 ֆաշարի մարտիկներ, որոնցից 9-ը զորավար, մնացած ամբողջ խումբը անցան հայոց պատմության մեջ որպես ԱՆՄԱՆՈՒԹ ԶԻՆՎՈՐՆԵՐ, զոհված Հայրենիքի սեղանի վրա:

Պատմությունը պահել է, եղիշեի դյուցազներգության մեջ, անունները Ավարայրի նակատամարտի 9 զորավարների. ֆաշն Վարդան՝ Մամիկոնյան տոհմից, հայոց սպարապետ և «գորագլուխ առաքինաց», 133 զինվորներով, կորովին Խորեն Խորխորունի՝ 19 ընկերներով, Պայունյաց ֆաշն Արտակ՝ 57 ընկերներով, զարմանալին Տանատ՝ Գեթունյաց տոհմից, 19 ընկերներով, Դիմախյան տոհմից իմաստուն Նմայակ՝ 22 ընկերներով, հրաշակերտ Ներսես Քաթրեունի՝ 7 ընկերներով, մանուկ Վահան Գեունի՝ 3 ընկերներով, Ընծայեցի արդարն Արսեն՝ 7 ընկերներով, և Մովանտյանց տոհմից հառաջադեմ Գարեգին՝ իր 2 եղբայրներով և 18 ընկերներով:

Պարսիկների կորուստը հասնում էր 3544 հոգու:

Իզար չէ, որ Ավարայրի դյուցազնամարտը կոչվել է, իր հերոսությամբ և բնույթական հաղթանակով, հայոց Թերմոպիլեն:

Ավարայրի նակատամարտը էլ ավելի համայնքեց հայ ժողովրդին, նախարարներին, շինականներին և հոգևորականությանը՝ Հայրենիքի և Եկեղեցու շուրջ: Նրանք բոլորը ներշնչված էին մի բարձր գաղափարականով, որի մեջ իրար հետ կցորդվում էին ՀԱՎԱՏԻ ՆՎԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԵՐԸ:

Հագվերտի կրոնական մոլեռանդության և բռնակալության, նրա դաժան հարկային ֆա-

ղափականության դեմ ծառանում էր հայ ժողովուրդը. «ՅԱՅՍՄ շԱԽԱՏՈՑ ՉՄԵՉ ՈՉ ՈՔ ԿԱՐԷ ԽԱՍՏԵԼ, ՈՉ ՀՐԵՇՏԱԿՔ ԵՒ ՈՉ ՄԱՐԻԿԿ, ՈՉ ՍՈՒՐ ԵՒ ՈՉ ՋՈՒՐ: ԱՄԵՆՅՆ ԻՆՉ ԵՒ ՍՏԱՑՈՒԱՄՔ ՄԵՐ Ի ՉԵՌՍ ՔՈ, ԿԱՄԱՑ ՔՈՑ ԱՐԱ ՉԻՆՉ ԵՒ ԿԱՄԻՍ: ԵԹԷ ՍՈՎԻՆ շԱԽԱՏՈՎՔ ԹՈՂՈՒՍ, ՈՉ ՅԵՐԿՐԻ ԱՅԼ ՏԷՐ ՓՈՒՍՆԱԿԵՄՔ ԸՆԴ ՔԵՉ, ԵՒ ՈՉ ԸՆԴ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՐ ՉԻՔ ԱՅԼ ԱՍՏՈՒԱՄ ԲԱՅ Ի ՆՄԱՆԷ»:

Պարսիկ նվաճողների դեմ իր ամբողջ հասկով ծառանում է հայ ժողովուրդը, ծառանում են եռյեթիսկ մեր հայրենի լեռներն ու Հայաստանի յուրափանչյուր ֆառ ու ամրոց:

Եվ Ավարայրի դաշտ իջավ մեր ժողովուրդը զեն ի ձեռին, հավետ ապրելու ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՒՏՈՎ: Ավարայրը խելյազար ու հուսահատական մի պատերազմ չէր, ինչպես ոմանք ձգտում են այն ներկայացնել, արդարացնել փորձելով վասակի ֆաղափական հեռանախությունը: Ավարայրում իրեն պարտված չի զգացել մեր ժողովուրդը ոչ Ե դարում, և ոչ էլ հայոց պատմության հետագա դարերում: Շատ հիշտ է նշել եղիշեն, գրելով, որ հայերը չհաղթվեցին Ավարայրում, «ՔԱՆՉԻ ՈՉ ԵԹԷ ԿՈՂՄ ԷՐ ՈՐ ՅԱՂԹԵԱՑ ԵՒ ԿՈՂՄ ԷՐ ՈՐ ՊԱՐՏԵՑԱԻ»:

Հայությունը Ավարայր իջավ ոչ թե մեռնելու, այլ «մահուամբ գման կոխելու»: Հաղթության ուրախությունը քակվորում է ռազմի դաշտում հայ ժողովրդին, և շարժվում է անդիմադրելի, հերոսական, տարեային, ժողովրդական մեծ գեար. «Քաշութեամբ միայն մեղցում, զանուն և զոգիս Եթ ժառանգեցցում, բայց միայն յարութիւնս ֆաշութեան վատութիւն մի՛ խառնեցցում»: Ռազմի դաշտում, եկեղեցական ուխտապահությունն ու հայրենասիրությունը իրար էր բերել, միացրել բոլորին, դարձրել մի սիրտ ու մի հոգի, հավասարապես լցված արիական ոգով, և պատրաստ՝ «ի մեռանել և ի սպանանել», որպեսզի «ԲԱՐՁՐԱՍՑԻ ԿՈՂՄՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԻ՛ ՔԱԿՏԵՍՑԻ ՈՒՒՏՆ շԱԽԱՏՈՑ ՄԵՐՈՑ»:

Ղևոնդի և Վարդանի մեջ խոստում է հավատավոր ժողովրդի և Հայրենիքի ձայնը: Ղևոնդյան և Վարդանանք, իրենց խմբերով, եղան ժողովրդական կամֆի արտահայտությունները: Ղևոնդի և Վարդանի ղեկավարությամբ, իր ազատության համար զենք վերցրած հայ ժողովուրդը պայծառ գիտակցությամբ ուներ իր գործի ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿԻ համար: Այս մտածման լույսի տակ պետք է դիտել, գնահատել Ավարայրի դյուցազնամարտը:

Ավարայրի դյուցազնամարտում դրսևորվեց հայ ժողովրդի միասնական, անյնորտակելի

կամֆը, արիության ռզին, ազատասիրությունը, եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունը:

«ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ՎԵՐՁԱՑԱՄ ՁԷ ԵՐԹԵՔ, — գրում է վեհափառ Հայրապետը իր վերոնիշյալ սրբատառ կոնդակում: — ՀԱՋԱՐ ԵՎ ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՐԻՆԵՐԵ Ի ՎԵՐ ՄԻՆՁԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ, ՇԱՐՈՒՆԱԿՎԱՄ Է ԱՆ ԲԱՋՈՒՄ ՁԵՎԵՐՈՎ, ԱՅԼԱՋԱՆ ԿԵՐՊԵՐՈՎ, ՄԵՐԹԻ ԼՈՒՌ ՈՒ ԹԱՔՈՒՆ, ՄԵՐԹԻ ՍՈՒՐԲ ՑԱՍՈՒՄՈՎ, ԽԻՋԱԽ ՈՒ ԱՆՎԱԽ, ՃԱԿԱՏ ԱՌ ՃԱԿԱՏ, ԲԱՅՑ ՄԻՇՏ ԱՆԱՅԼԱՅԼ ԵՎ ՄԻՇՏ ՀԱՄԱՌ:

ԵՎ ԱՅՍՊԵՍ Է, ՈՐ ՎԵՐՍՏԻՆ ԾՆԱՎ ՈՒ ՆՈՐ ԿՅԱՆՔ ԱՌԱՎ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ՝ ՄԵՐ ԵՎ ԵՐԿԻՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ:

ԵՎ ԱՅՍՊԵՍ Է, ՈՐ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ ԵՎ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿՎԻ ԵՐԹԸ ՀԱՂԹԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»:

Այսօր, Ս. Ղևոնդյանց և Ս. Վարդանանց հաղթական դրոշակը իր սուրբ ձեռքերում է պահում նորից Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ և Ազգիս սիրելի Հայրապետի առաջնորդությամբ:

Ինչպես երեկ, նույնպես և այսօր ու հավիտյան, հայ հոգիների անդաստանում, բո՛լ միշտ վառ ու պայծառ մեան Ս. Ղևոնդյանց եկեղեցական ուխտապանության գիտակցությունը և Ս. Վարդանանց հայրենասիրական ռզին:

